Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1903. № 181.
2924

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՆ

ՎԵՐԱԾԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Երկրորդ տպագրութիւն

Տպագրեալ ծախիւք Թեմական Դպրանոցի Նոր-Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ Վիճակին:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ ՍԵՐՈՎԲԷ Յ. ՍԻԱԴԵԱՆԻ
1902

491.99-8
Բ-23

арм-к
2924
491.99-8
Բ-23

04 MAY 2018

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

եւ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՆ

ՎԵՐԱԾԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Երկրորդ տպագրութիւն

Տպագրեալ ծախիւք Թեմական Դպրանոցի Նոր-Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ Վիճակին:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ ՍԵՐՈՎԲԷ Յ. ԱՒԱԳԵԱՆԻ
1902

28.02.2013

7967

Дозв. Цензур. С.-Петербургъ. 3 Августа. 1902 г.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ

60675-67

Հեղինակի յառաջաբանը

1. Ընթերցանութեան մեքենական յաջողակութիւնը վարժուում է այն նիւթի վերայ, որ աշակերտներին ոչ միայն ծանօթ է, այլ եւ սիրելի է դարձած: Ուսուցիչը այստեղ հարկաւորութիւն չունի ժամանակ կորցնելու ընթերցածի բովանդակութիւնը բացատրելու համար:

2. Բարոյագիտութեան նիւթին մենք մեծ կրթող նշանակութիւն չենք տալիս, ինչպէս այդ կարելի է տեսնել մեր „Ուղեցոյց հայ ուսուցչի" աշխատութիւնից: Ուստի եւ ցանկալի էր, որ առաջին տարուայ մեծագոյն մասնը գործադրուէր դոցա վերայ, եւ „Առաջին Ընթերցարանը" տրուէր աշակերտների ձեռը միայն այն ժամանակ, երբ արդէն մշակուած է թէ բարոյագիտութեան նիւթը եւ թէ այբբենարանը: Այդ պատճառաւ եւ մենք կարծումենք որ նպատակայարմար կը լինէր դասերի թիւը տարուայ վերայ բաժանել մօտաւորապէս այսպէս: Շաբաթական դասերի թիւն է 24: Դպրոցական տարուայ սկզբից մինչեւ Փետրուարի 15-ը բարոյագիտութիւնից նշանակուում է 18 ժամ, թուաբանութիւնից 3 ժամ (6 կէս ժամ), կարդալ եւ գրելու նախավարժութիւններից (գծագրութիւն, վերլուծութիւն, իսկ յետոյ այբբենարան) 3 ժամ (6 կէս ժամ): Փետրուարի 15-ից մինչեւ դպրոցական տարուայ վերջը երեխաները գլխաւորապէս զբաղուում են կարդալով „Առաջին Ընթերցարանի" նիւթը: Այդ ժամանակամիջոցում ընթերցանութեան վարժութեանց հետ զուգընթաց յառաջ են գնում եւ ուղղագրութեան վարժութիւնները:

3. Թուաբանութիւնից մենք բաւական ենք համարում առաջին տարուայ համար 1—10: Հակառակ դիպուածում՝ ուր հարկը պահանջում է դուրս գալ այդ սահմանից, այնտեղ «Առաջին ընթերցարանի» երկրորդ մասը հարկաւոր է թողնել երկրորդ տարուան, որով եւ ձեռն կը բերուի բաւականաչափ ժամանակ թուտբանութեան համար.

4. Աւելորդ չենք համարում այստեղ յայտնել մեր խորին շնորհակալութիւնը Գէորգ Դոդոխեանցին, նորա մի քանի ոտանաւորների համար, որոնք եւ մենք մեծ ուրախութեանը ընդունեցինք մեր «Առաջի ընթերցարանի» մէջ: Դոքա են №№ 10, 30, 34, 40, 42, 43, 55, եւ 59: Սոցա արտատպութեան իրաւունքը վերապահուած է: Մեզ իբրեւ աղբիւր ծառայել են նաեւ Պատկանեանի գրուածները, որի անունը երաշխաւոր է նիւթի գեղեցկութեան:

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ.

I.

Էշ, խոզ, աչք, շուն, ծառ:

Ծուխ, ծուռ, ծուծ, ածու, առու, անուն, ածուխ, ախոռ:

Կ ո վ.

Ծակ, խակ, ծով, ղով, կառք, կանաչ, կանուխ, կոկոն:

Ճ ի ւ ղ.

իւղ, շիւղ, աղ խաղ, կողղ, ճաշ, ճանճ, քաղաք, վէճ, ծուղակ:

Ց ո ւ լ.

ուլ, խուլ, խուց, կալ, ցախ, լաց, ցաց, ցանկ, ցանք, ցող, ցոլակ:

մ ո ւ կ.

մաճ, մաղ, մաշ, մաշկ, մոմ, մոշ, ծոմ մէկ, մամուռ, մածուն, մանուկ, նամակ, նուռ, ակ:

Մուկը կը կըրծէ:
Ծառը կանաչ է: Մանուկ:

Լ ո ւ ս ի ն.

սոխ, սալ, սիւն, ցից, ուս, միւս, միս, ինքը, ինը, մաս, սունկ, սառը, սամի, չամիչ, իլիկ, կացին:

Լուսինը կը շողայ:
Խոզը կը խանչէ:
Մովսէս, Մինաս, Մամիկոն, Խաչիկ, Խոռ:

Թ ի թ ե ռ.

թուրթ, թուխ, թուզ, թուշ, մուրթ, թակ, կաթ, թաթ, թոկ, կոթ, թել, սեռ, լեռ, ցեխ, կեռ, թոռ:

Թիթեռը կը թռչի:
Նուռը թըթու է:
Թովմաս Թաթիկ, Թոռնիկ:

ա ր ջ.

իւր, ուր, ջուր, թուր, սուր, մուր, մուրճ, չոր, ծոր, նոր, կար, կարճ, ճար, խար, ջանք, ջերմ, քաջ, ունջ, մունջ, քար, ջորի, ջուրթակ, արիւն, ականջ:

Արջը ունի մեծ մեծ թաթեր:
Շունը կը հաջէ:
Արամ, Արշակ, Աննա, Աշխէն, Արմենակ, Առաքել, Արսէն, Թորոս, Խոսրով, Խորէն:

տ ա փ ա ն.

փուշ, նուշ, շուն, տուն, փոկ, փողջ, փոր, փակ, ուղտ, արտ, կուտ, սուտ, տափակ, կատու, տուփ, տետրակ, փեսուր:

Տափանով կը տափեն հերկած գետինը:
Կովը կ'ուտէ խոտ ու խար:
Տիրան, Տաճատ, Տիրիթ, փառնակ, փառոխ

Հաւ

կաւ, լաւ, ցաւ, սեւ, արեւ, տերեւ, կեղեւ, աւել, ծարաւ, կաքաւ, հեշտ, հաց, հում, հով, հող, հովիւ, հիւսքն:

Աղաւնին կը մնչէ:
Հաւը կը կուկուայ:
Հացը կեփեն ալիւրէ:

Հեթում, Հեղինէ, Հռիփսիմէ, Համազասպ, Շուշան, Շողակաթ, Շաւարշ, Շմաւոն, Աւետիք:

Կապիկ.

պատ, կապ, պանիր, կապերտ, տափակ, պարապ, պառաւ, պաստառ, շապիկ, պատկեր, քամի, քեռի, տապակ:

Կապիկը կը պարէ:
Տապակի մէջ միս կը տապկեն:

Կարապետ, Կիւրեղ, Կիրակոս, Կամնար, Կորիւն, Պետրոս, Պապ, Պերճ:

Սագ.

գոմ, գող, գիւղ, գիծ, գիրք, հինգ, հոգս, գառ, գարի, ագի, հոգի, գագաթ, գազար, գաղան, գետ, գետին, գինի, գիշեր, գլուխ:

Գուրթանով կը հերկեն գետինը:
Գինին կը շինեն խաղողէ:
Սագը կը լողայ լճի մէջ:

Սաթենիկ, Սարգիս, Սիսակ, Սուրէն, Սուքիաս, Սոփիա, Գագիկ, Գեղամ, Գիւտ, Գարեգին, Գալուստ, Աւագ, Տիգրան, Թագուհի:

Ձի.

ձու, ձեւ, ձախ, ձագ, ձար, ձէթ, ձոր, ձիւն, ձող, սանձ, տանձ, գանձ, հընձան, ձեռ, ձաւար, հունձ:

Ձուկը կը լողայ գետի մէջ:
Ձին կ'ուտէ գարի ու վարսակ:
Ալտերը կը հնձեն մանգաղով:

Փիլիպպոս, Փառանձեմ, Փառնաւազ, Ղազար, Ղուկաս, Ղեւոնդ:

բաժակ.

բակ, բալ, բարձ, բողկ, ուժ, կուժ, ժամ, ժանգ, բուն, բուք, բուռ, բերան լոբիա, կաղամբ, կաքաւ:

Բաղարջ կ'ասեն անխմոր հացին:

Բահով կը փորեն գետինը:

Բաժակով ջուր կը խմեն:

Բագրատ, Բարսեղ, Բաբիկ, Բաբկէն, Բաբ, Նահապետ, Ներսէհ, Ներսէս, Համբարձում:

սարդ.

բաղ, վարդ, բուրդ, դաղձ, դառը, դաս, դեղ, դեղձ, դատարկ. դարպաս, դիւրին:

Դարբինը կը կռէ մրճով:

Դուրով կը ծակեն տախտակը:

Սարդը կը բռնէ ճանճ:

Դաւիթ, Դանիէլ, Մամբրէ, Մեսրոպ, Տիգրան, Տրդատ, Նուարդ, Կարդոս:

օձ.

օր, օդ, օղ, օղի, մօտ, խոսք, գօտի, արօր, կօշիկ, օրօրոց, ցող:

Օդանգքով կ'անցնի օդը:

Օձը մի թիւնաւոր սողուն է:

Վարդան, Վահան, Վասակ, Վարսէն, Վազգէն, Վարդգէս, Պողոս:

Ֆուրգոն:

II.

ոչխար.

որ, որբ, որս, որթ, որջ, ողջ, ոստ, ոսկոր, որկոր, որքան, որդի, որդ, ոտք, ուղեռ, ոգնի, ոսկի, ոչինչ, ոչ ոք:

Ոչխարը կուտայ կաթ:

Ամպերը կորոտան:

Ոսպը կ'ուտեն պասին:

Թադէոս, Թէոդոս, Գէորգ, Ոսկան, Թէոդորոս, Ռուբէն, Ռոստոմ, Ռաքէլ:

եկեղեցի.

երկու, երեք, եօթը, եղ, երես, երկար, եթէ, եւ, երկինք, երբ, երգ, երեկ, երկաթ, եղջիւր, երազ:

Եկեղեցու մէջ աղօթք կ'անեն:
Ես արդէն կարդալ գիտեմ:
Եղիշէ, Եփրեմ, Եզնիկ, Երուանդ, Եղիազար, Եղիսաբէթ, Արշակ Տիգրանեանց, Արսէն Արամեան, Վարդան Մամիկոնեան:

Շ Ղ Թ ա յ.

Ծառայ, փեսայ, կաթսայ, հիմայ, տղայ, ընծայ, ամառուայ տաքը, ձմեռուայ ցուրտը, վաղուայ գործերը, այսօրուայ ամպերը, երէկուայ անձրեւը: Ես եկայ, ես իմացայ, ես հասկցայ, ես ուրախացայ, ես ուշացայ, ես մոռացայ: Նա կուտայ, նա կուգայ, նա կը մնայ, նա կիմանայ, նա կը կարդայ, նա կը հասկանայ, նա կուշանայ: Եթէ նա գայ, եթէ նա գնայ, եթէ նա լաւանայ, եթէ նա իմանայ:
Այսօրուայ գործդ վաղուան մի ձգիր:
Շաղթան ունի շատ օղակներ:
Սա, դա, նա, սորա գիրքը, դորա տեսրը, նորա մատիտը: Սա՛, արա՛, կարդա՛, գնա՛:
Շուշանիկ, Շողակաթ, Արայ, Զարէհ, Հրաչեայ, Նոյ:

յ ո պ ո պ.

Յարդ, յարկ, յատակ, յօժար, յարմար, յետոյ, յետին, յանկարծ, յիմար:
Յոպոպը կը կանչէ յոպ յոպ:
Յունապը մի պտուղ է:
Յակոբ, Յովսէփ, Յիսուս, Յովակիմ, Յարութիւն, Յուսիկ, Յովհաննէս:

գ ա յ լ.

Հա՛յ, վա՛յ, ա՛յ, է՛յ, չա՛յ, թէ՛յ, այլ, սայլ, քայլ, այծ, կայծ, այր, ծայր, հայր, մայր, այն, լայն, ձայն, երկայն, այս, այդ, այգի, այժմ, փայտ:
Գայլը մի վայրենի գազան է:
Հայը հայերէն կը խօսի:
Հայկ, Հայկակ, Նորայր, Զարմայր:

ո ղ կ ո յ զ:

Բոյս, յոյս, լոյս, բոյթ, ճըկոյթ, մատը, գոյն, կոյր, ոյժ, ծոյլ, թոյլ, մի զոյգ գուլպայ, նոյն, ողջոյն:

Ողկոյզ կասեն խաղողի կուզին:
Ընկոյզը ունի կակալ, փեճեկ եւ միջուկ:
Քերովբէ, Քրիստոս:

III.

Ազգ, բարձ, բողկ, գիրք, գործ, գինձ, թամբ, թանկ, կարթ, կարճ, կոշտ, հաստ, հեշտ, ճանճ, մարդ, ներկ, պարզ, պինդ, տանձ:

Ծանր, սանր, տեսր, մանր, ցածր, տապր, դուռն, ձեռն, նուռ, թիթեռ, լեռ, մուկ, խառն, եզ, գառը, սառը, դառն, ուսում, թոռը, սեռը, հիւսն, որդը, ոտը, կաթը, կոճղ, շունս. խոզդ, ծաւս, կովդ, ցուլս:

Բարձր, դուստր, թանձր, գործ, հայրս, մայրդ, գիրքս, գորգդ, սանրս, տեսրդ, տապրդ, բարձդ, ինքն, քաղցր, անգդ, աստղ:

Գլուխ, գրիչ, դմակ, խմոր, խմիչք, բժիշկ, փլաւ, ծմակ, ծնողք, կծիկ, կռան, կրակ, հրաման, հրեշտակ, ձմեռ, ճրագ, մշակ, տղայ, թթու, Քրիստոս:

Գնդակ, բլթակ, հնձան, գրպան, դպրոց, թմբուկ, թռչուն, խնձոր, ձըկնիկ, խրճիթ, մկրատ, կնճիթ, մրջիւն, նշխար, շղթայ, նռնենի, պղտոր, ջնջոց, ջրհոր, Տրդատ: Հաւը կը կոցէ: Արտը կը հնձեն:

Ճռճռոց, տզտզոց, մռմռոց, բզբզոց, կռկռոց, զռզռոց, ճնճղուկ: Տղին մի խաղտիր: Գիրքդ մի քրքրիր: Արջը կը մրթմրթայ: Նա քիթին տակէն կը բռբռայ: Պառաւը կը տքայ: Մեղուները կը թռչկոտին: Թիթեռները կը թըռթռան: Հաւը կը կռկռայ: Ծիծեռնակը կ'երգէ:

Իժը օձ է։ Լեռը սար է։ Ցողը շաղ է։ Ֆուրգոնը սայլ է։ Էշը կը զռայ։ Ճանճը կը թռչի։ Օձը կը սողայ։ Ծառը կանաչ է։ Զամիչը քաղցր է։ Զուրը պաղ է։ Ընկոյզը կուտեն։ Զին ունի բաշ։ Ժամը քանի է։

Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ·

1. ՏՂԱՅ ԵՒ ԾՆՈՂՔ

Ես տղայ եմ։
Ես ունիմ հայր ու մայր։
Հայրս ու մայրս իմ ծնողքս են։
Ինձ կը կերակրեն իմ ծնողքս։
Նոքա ինձ կուտան զգեստ ու կօշիկներ։
Նոքա ինձ անկողին կը պատրաստեն
քուն լինելու համար։
Իմ ծնողքս կը սիրեն ինձ։
Ես ալ կը սիրեմ իմ ծնողքս։

2. ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ

Ես ունիմ մէկ եղբայր եւ մէկ քոյր։
Իմ եղբօրս անունը Արմենակ է։
Իմ քրոջս անունը Վարսենիկ է։
Նոքա միշտ կը խաղան ինձ հետ։
Ես շատ կը սիրեմ եղբօրս ու քրոջս։

ՀՍՍՌ-Ամ ՍԱՀ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3. ԻՆՉՈՎ ԻՆՉ ԿԱՆԵՆ

Արօրով կը վարեն, տափանով կը տափեն: Մանգաղով կ'հնձեն, կամնով կ'կամնեն: Դանակով կը կտրեն սղոցով կը սղոցեն: Դուրով կ'փորեն, շաղափով կ'շաղափեն: Ուրագով կ'տաշեն, ձեռներով կ'շինեն: Սսեղով կը կարեն գրիչով կը գրեն:

4. Ո՞Վ ԻՆՉ ԿԱՆԷ

Աքաղաղը կը կանչէ, հաւը կը կռկռայ: Աղաւնին կը մնչէ, էշը կը զռայ: Կովը կը բառաչէ, կաքաւը կը կղկղայ: Արջը կը մրթմրթայ, խոզը կը խանչէ: Կաչաղակը կը կարկաչէ, ճնճղուկը կը ճռուոզէ Ձին կը խրխնջայ, արտուտը կը ծլրտայ: Շունը կը հաչէ, կատուն կը մլաւէ: Բզէզը կը բզզայ, գառը կը մայէ: Տղան կուլայ, զանգակը կը զնգզնգայ: Կօշիկը կը ճռճռայ, առիւծը կը մռնչէ:

5. ԻՆՉԷ՞Ն ԻՆՉ ԿՇԻՆԵՆ

Սեղանը կը շինեն փայտէ, կտաւը կը գործեն կանեփէ: Կօշիկը կ'կարեն կաշիէ,

կացինը կը շինեն երկաթէ: Հացը կեփեն ալիւրէ, ապուրը կեփեն մսէ: Կարագը կ'հարեն կաթէ, ճրագը կ'թափեն ճարպէ:

6. ԳՈՅՆԵՐ

Ձիւնը սպիտակ է: Ածուխը սեւ է: Մոխիրը գորշ է: Շագանակը թուխ է: Ոսկին դեղին է: Արտը կանաչ է: Երկինքը կապոյտ է: Արիւնը կարմիր է: Կաթը սպիտակ է: Թանաքը սեւ է: Ամպերը գորշ են: Դեղձանիկը դեղին է: Խոտը կանաչ է: Մանուշակը կապոյտ է: Վարդը կարմիր է:

7. ԱՐԵԳԱԿ

Արեգակը բոլորակ է: Նա կը փայլի ոսկիի պէս: Արեգակէն կը ծագեն շատ ճառագայթներ: Արեգակը առաւօտուն կը ծագի, իրիկունը մայր կը մտնի: Երբ արեգակը կը ծագի, օրը կը լուսանայ, ցերեկ կը դառնայ: Երբ արեւը մայր կը մտնի, օրը կը մթնի ու գիշեր կը լինի: Առանց արեւի եւ առանց լոյսի ապրել անկարելի է:

8. ԱՐԵՒ.

Արեւ, արեւ, դուրս արի,
Քեզ բերել ենք աչքի լոյս,
Քու քուրիկը լուսնիկան
Բերեց չամիչ մէկ աման,
Ամպը եկաւ մութ արաւ,
Չամիչն աչցերէս կորաւ,
Բաց երեսդ, արեգակ,
Մէկ բուռ չամիչ քեզ կուտանք...
Օ՜խ, արեւինոխարեցինք,
Ամպի տակէն հանեցինք։

9. ԱՌԱՒՕՏ.

Արեգակը ծագել է։ Օրը լուսացել է։ Թռչունները արդէն արթնցել են եւ կերգեն ծառերու վերայ։ Ես ալ քունէս կշտացել եմ, ելնեմ, ինչու պառկած եմ։ Սեղանի վերայ արդէն կ'Եփի ինքնաեռը, շուտ անեմ, երեսս լուանամ եւ շորերս հագնիմ, եթէ ոչ դասերէս կ'ուշանամ։

10. Հանելուկ.

Վերը ծակ, վարը ծակ,
Մէջը ջուր ու կրակ։

Այս ինչ է։

11. ԳԻՇԵՐ

Արեգակը մայր մտել է, մթնել է։ Դուրսը ամենեւին ձայն չի լսուիլ։ Ոչխարներն ու կովերը արօտէն արդէն տուն դարձել են։ Թռչունները քնած են։ Երկնքի վերայ կերեւնան լուսինն ու աստղերը։ Լուսինը լոյս կուտայ, աստղերը կը ցոլան։ Շուտով հարկաւոր է հանուել եւ պառկել ու քուն լինել։

12. Հանելուկ.

Մէկ քոյր ունինք և մէկ եղբայր, Երեկոյին կը մեռնի,
Նոքա կապրին երկինքը. Միւսն կընծայի երեկոյին,
Մին կընծայի առաւօտուն, Առաւօտուն կը մեռնի։

Այս ինչ է։

13. ԱՍՏՂԵՐ

Աստղերը կը նմանին մեծ մեծ կայծերու։ Նոցմէն մէկ քանին խիստ պայծառ կը փայլին, մէկ քանին աղօտ լոյս կուտան։ Աստղերը կը տեսնուին միայն այն ժամանակ, երբ երկինքը ամպած չէ։ Շատ գեղեցիկ տեսք ունի աստղերով զարդարուած երկինքը։ Ես շատ կըսիրեմ գիշերները նայել նոցա վերայ։ Այդ ժա-

մանակ ես միտքս կը բերեմ բարերար Աստծուն, որ ստեղծել է աստղերը եւ շարել երկնքի վրայ։ Մենք կարող չենք համրել աստղերը։ Նոքա անթիւ են։ Կան մարդիկ, որ կը ճանաչեն իւրաքանչիւր աստղը։

14. ԻՄ ԱՆԿՈՂԻՆՍ

Արդէն մութ է եւ ես յոգնած եմ։ Գնամ պառկեմ անկողնիս մէջ։ Անկողնի մէջ տաք է ու փափուկ։ Երբ լոյսը բացուի, անկողնէս կելնեմ։ Մենք պէտք չէ, որ երկար քուն լինինք։ Հիւանդ մարդը ցերեկն ալ անկողնի մէջ պառկած պիտի մնայ։ Պառկելներէս առաջ պէտք է աղօթք անենք։ Նոյնպէս ալ պիտի աղօթք անենք առաւօտուն տեղերէս ելլածներուս պէս։

15. ՑԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո. որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Փառք և երկրպագութիւն ի բարձունս հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

16. Հանելուկներ.

Ցերեկը աղա,
Գիշերը ծառայ։
Այս ինչ է։

Կը բռնեմ բուռովս մէկ,
Բաց թողնեմ, տունովս մէկ։
Այս ինչ է։

17. ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ.

Ես ունիմ երկու աչք, երկու ականջ, երկու ձեռք, երկու ոտք եւ մէկ բերան։ Աչքերովս կը տեսնեմ։ Ականջներովս կը լսեմ։ Ձեռքերովս կը բռնեմ։ ոտքերովս կը քալեմ։ Բերանովս կը խօսիմ։ Ով որ չի տեսնիլ, նա կոյր է։ Ով որ չի լսիլ, նա խուլ է։ Ով որ չի կրնալ շիտակ քալել, նա կաղ է։ Ով որ չի կրնալ խօսել, նա համր է։

18. Հանելուկներ.

Մէկ ծառ կայ,
Ծառին վրայ մէկ կալ.
Ամէն տալին մէկ մէկ սալ։
Այս ինչ է։

Դալին վրայ հինգ տալ,

Ձամբուն աջ ու ձախ կողմը,
Նստած են երկու եղբայր,
Բայց չեն տեսնել մէկ մէկու։
Այս ինչ է։

Մի կաթսայ ունինք կրակին վրան դրած,
Նրա մէջ քիչ մը դմակ կայ ձգած,
Կը հալի կաթսան դմակը կ'մնայ։
Այս ինչ է։

Երկու սենեակ, մէկ սիւնեակ։
Այս ինչ է։

19. ԶԳԵՍՏՆԵՐ

Մենք զգեստներ կը հագնինք որ չմերսինք։ Ես ունիմ գտակ ու բաճկոն, շապիկ ու վարտիք, կօշիկ ու գուլպայ։ Կիրակի օրը մենք մեր նոր զգեստները կը հագնինք։ Մեր բաճկոնը գրպան ունի։ Գրպաններուս մէջ կը պահենք թաշկինակը։ Ո՞վ կը կարէ զգեստներ։—Դերձակը։ Ո՞վ կը մաշէ ու պատռտէ զգեստներ։—Տղայք։ Ո՞վ կը կարկատէ զգեստներ եւ բանէ գուլպաներ։—Սիրելի մայրիկը։

20. ՄԵԾ ՊԱՐՈՆ ԴԱՐՁՈՂ ՏՂԱՆ

Մէկ փոքրիկ, հինգ տարեկան տղայ մէկ անգամ ինքն իրեն ասաց. „Է՛հ, ալ չուզիմ փոքրիկ մնալ. այժմ ես կարող եմ մեծ պարոն դառնալ։ Ասաց ու հագաւ հօր գտակը, ձեռքն առաւ նորա փայտը

եւ մինչեւ կէս մէջքը գտակին մէջը թաղուած փողոց ելաւ։ Ով որ կը տեսնէր այդ փոքրիկ պարոնին, կանգ կառնէր, վրան կը նայէր եւ ծիծաղելով կասէր. „Է՛յ, դու պարոն գտակ, ո՞ւր կը տանիս այդ տղին“։

21. ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Ես կուտեմ հաց ու գաթա, կաթ ու պանիր, ապուր ու փլաւ, միս ու ձու, լոբիա ու մաշ, սիսեռ ու բակլայ եւ շատ ուրիշ բաներ։ Հացը կը թխեն ալիւրէ։ Ալիւրը կը շինեն ցորենէ։ Ցորենը կը բռնի արտերու մէջ։ Ջրաղացը կ'աղայ ցորենը եւ կը շինէ ալիւր։ Ալիւրէն կը շինեն խմոր, խմորէն հաց։ Բայց Ո՞վ կուտայ մեզ կաթ ու միս։ Կան մարդիկ, որ ոչ հաց ունին, ոչ ալ միս։ Նոքա աղքատ են։

22. ՀԱՑ

Մենք ամիսը մի անգամ հաց կեփենք։ Խմորհունձողը երեկոյին կուգայ, տաշտի մէջ ջուր, ալիւր, աղ ու խմորոց

կը լցնէ ու կը հունձէ, կը դառնայ խմոր։ Խմորի վրան նա կը ծածկէ եւ կը թողցնէ որ գայ։ Լուսադէմին կուգայ հացթուխը, թոնիրը կը վառէ։ Ցետոյ խըմորը կը գնդէն ու կը շարէն։ Խմորհունձողը տրապեզին վրայ գրտնակով գունդերը կը բանայ եւ կուտայ հացթուխին։ Սա բացը կը փռէ պատատի վրայ եւ կը կպցնէ թոնրի կուշտին։ Հացը թոնրէն նա կը հանէ հացահանով եւ կուտայ մօրս։ Մայրս ալ հացերը կը փըռէ, կը չորցնէ, կը ժողվէ եւ միմեանց վրայ կը շարէ, կը պահէ։

23. ՄԼԱՂԱՑ ԵՒ ՋՐԱՂԱՑ

Ո՞ր տեղէն ալիւր կը ստանանք։ Մլաղացը կ'աղայ իւր ջրաղացի մէջ։ Ջրաղացի մէջ մէկ մեծ անիւ կայ, որ ջրով ման կուգայ։ Անիւը կը պտտէ այն ծանր քարը, որ կը փշրէ ցորենը եւ ալիւր կը դարձնէ։ Այդ ժամանակ երկանաքարը այնպիսի չխչխկոց կըհանէ, որ մարդուս խօսածը հազիւ կը լսուի։ Ալիւրի փոշին կը թռչտի եւ կը լեցնէ ջրաղացը։

24. Հանելուկ.

Երկու քաղցած գազան կան, Նոքա աշխարհը կը լափեն,
Ոչք ձորի մէջ կը մռմռան։ Բայց և աշխարհը կը պահեն։
Այս ինչ է։

25. ՋՈՒՐ

Ջուրը կը լինի ջրհորի, աղբիւրի, լճի ու գետի մէջ։ Ջրհորէն ու աղբիւրէն մենք խմելու ջուր կը ստանանք։ Բայց արտերուն, բոյսերուն եւ ծառերուն ալ ջուր հարկաւոր է։ Երկնքի ամպերը իրենց անձրեւով կը ջրեն նոցա։ Մայրս ջուր կը բանեցնէ նաեւ մէկ բան եփելու եւ լուանալու համար։ Ջրի մէջ կ'ապրեն ձկներ, խեցգետիններ, գորտեր եւ շատ ուրիշ կենդանիներ։ Սագերն ու բադերը կը սիրեն ջրի մէջ լողալ։ Երբ նոքա ջրէն դուրս կելլեն, իրենց թեւերէն վար կը թափեն ջուրը։ Աղբիւրէն ջուր կը խմեն կովերը, ոչխարները, ձիերը եւ դաշտի ու անտառի մէջ բնակող անասունները։ Ջմեռը ջուրը կը պաղի, սառոյց կը դառնայ։

26. Հանելուկներ.

Կը կտրեմ, կերկընայ, Կը տաշեմ, կը լայնայ։
Այս ինչ է։

Մէկ մը կայ, Ման կուգայ—ոտքեր չունի,
Որ կը խօսի—բերան չունի, Մարդասպան է—սուր չունի։
Այս ինչ է։

27. ԱՆՁՐԵՒ.

Անձրեւ, անձրեւ, ցած արի,
Բլսցուր ցորեն ու գարի,
Բլսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Ալէ փոշի, մաքրէ օդ։
Անձրեւ անձրեւ ցած արի,
Գալըդ ամէնուս բարի։

28. ՏՂԱՆ ՍԱՌՈՅՑԻ ՎԵՐԱՅ

Զմեռը դեռ նոր սկսուել էր, ջուրը դեռ լաւ պաղած չէր։ Այդ ժամանակ տղին մէկը կանգնած էր մէկ լճի քով։ Տղան նայեցաւ նայեցաւ ու ասաց իւր մտքէն. «Արի երթամ ու սառոյցի վերայ փոքր ինչ խաղամ»։ Ասաց ու արաւ։ Հազիւ թէ սահել սկսած էր, սառոյցը ճաթեցաւ։ Դրսմի. մեր տղան մինչեւ վիզը թաղուեցաւ լճի մէջ։ Նա սկսաւ աղաղակել. «Ո՛հ, օգնեցէ՛ք, թէ չէ ես կը խեղդուիմ»։ Մէկ մարդ վրայ հասաւ, բըռ-

նեց մազերէն եւ դուրս հանեց լճի մէջէն։ Ոտքէն մինչեւ գլուխը ջրի ու ցեխի մէջ թաղուած տուն գնաց։ Հայրը բռնեց նորան եւ աղէկ ծեծեց։ Ի՞նչու։

29. ՍԵՆԵԱԿ

Մեր սենեակը ունի չորս պատ. մէկը աջակողմեան, միւսը ձախակողմեան, մէկը առաջին, մէկն էլ ետեւի։ Մէկ պատին վրայ կը գտնուին լուսամուտներ, միւսին վրան դուռ։ Ամեն մէկ սենեակ կունենայ նաեւ մէկ առաստաղ եւ մէկ յատակ։ Առաստաղը սպիտակցուցած է, յատակը տախտակ-գամած։ Սենեակի մէջ կայ մէկ վառարան, մէկ սեղան, մէկ դարան, մէկ պահարան եւ շատ աթոռներ։ Վառարանը ձմեռը կը վառենք. Սեղանի վերայ ճաշ եւ ընթրիք կուտենք, կամ կը կարդանք ու կը գրենք։ Դարանի մէջ մեր սպիտակեղէնը կը պահենք, իսկ պահարանին մէջ մեր զգեստները։ Ի՞նչ բանի համար են աթոռներն ու հայելին։ Սենեակը մեզ կը պահպանէ անձրեւէ, քամիէ եւ ցրտէ։

30. ԴՊՐՈՑ

Դպրոցի մէջ բոլորովին ուրիշ կերպ է քան թէ մեր տունը։ Դպրոցի մէջ աշակերտները կարգով նստած կը նային ուսուցչի վերայ։ Ուսուցիչը կը պատմէ աշակերտներուն լաւ լաւ հեքեաթներ։ Նա նոցա հետ կը խօսի նաեւ անասուններու, թռչուններու, ծաղիկներու, երկնքի ու բարերար Աստծու վրայ։ Ուսուցիչը կը հարցնէ, աշակերտները կը պատասխանեն։ Նոքա կը պատմեն, կը կարդան, կը գրեն, կը հաշուեն, կը գծագրեն ու կ'երգեն։ Նոքա պիտի ուշադրութեամբ լսեն եւ ջանասէր լինին։ Ամօվ նոքա կ'ուրախացնեն իրենց ծնողաց եւ ուսուցչին։ Աստուած կը սիրէ բարի եւ ջանասէր տղոց։

Թէև փոքրիկ եմ խաղասէր,
Պիտի լինիմ ես ջանասէր։
Չէ՞ որ մեղուն՝ փոքրիկ ինձմէն՝
Մեղը կը ժողվէ ծաղիկներէն։

31. ԲԱՆՋԱՐԱՆՈՑ.

Մեր տան առջեւը մէկ բանջարանոց կայ։ Բանջարանոցը ցանկով պատած է։ Այնտեղ կան փոքրիկ ակօսներ։ Ակօսներուն մէջ կը ցանեն լախուր, սոխ, բողկ, լոբիա, բակլայ, մաշ, վարունգ ու ծաղիկներ։ Բանջարանոցի մէջ կան նաև խոտ ու ծառեր։

32. ԱՑԳԻ.

Կար չկար մէկ ծերունի կար։ Նա հիւանդացաւ և մեռնելէն առաջ կանչեց իրեն որդւոցը և ասաց. «Սիրելի որդիքս, իմ ունեցած չունեցածս այս տունն է և այս այգին։ Ուրիշ բան չունիմ, որ ձեզ թողնեմ։ Բայց այդ այգիին մէջ թաղուած գանձ կայ. փորեցէք, անշուշտ կը գտնէք»։

Նոքա մահից յետոյ որդիքը սկսան փորփրել։ Փորեցին, փորփրեցին, մէկ բան չգտան։ Բայց հետեւեալ տարին այգին մեծ առատութեամբ խաղող տուեց։ Այն ժամանակ միայն հասկացան նոքա, թէ ծերունին ինչ գանձի վերայ խօսել էր։ Ուստի այգիի դրան վրայ մեծ մեծ տառերով գրեցին. «Աշխատասիրութիւնը յիրաւի ոսկիի մէկ հանք է»։

33. ՄԱՆՈՒՇԱԿ.

Մանուշակը գեղեցիկ, փոքրիկ ծաղիկ է։ Նոքա գոյնը կապոյտ է, հոտը անոյշ։ Ո՞րտեղ կը բռնի մանուշակը։ Նա կը բռնի թուփերու տակ, արօտներու մէջ։ Հայկանուշը բանջարանոցին մէջ գտաւ մէկ փոքրիկ մանուշակ և բերեց իւր մօրը։ Մայրը ուրախացաւ և համբուրեց իւր փոքրիկ, սիրուն Հայկանուշին։ Արմենակն ալ մի փունջ մանուշակ բերեց իւր ուսուցչին։ Ուսուցիչը շնորհակալութիւն արաւ և ասաց։ «Շատ ապրիս»։

34. ԳԱՐՆԱՆԱԲԵՐ.

Կապոյտ գլխով, կանաչ ոտքով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով։
Թէև տունկս փոքրիկ է ցած,
Աբօտներու մէջ միշտ պահուած,
Բայց իմ փունջս ամենի տան—
Թէ աղքատի, թէ մեծատան—
Իբրև գարնան առաջին զարդ,
Կրնայ տեսնել ամեն մէկ մարդ։
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունս է մանուշակ։

35. ԿԵՌԱՍԵՆԻ.

Կեռասենին ունի գեղեցիկ, սպիտակ ծաղիկներ։ Ծաղիկներուն վերայ կը թռչին մեղուներ։ Մեղուները իրենց համար ծաղիկներէն մեղր կը ժողովեն։ Ծաղիկները թափուելէն յետոյ՝ կերևան կեռասներ։ Նոքա առաջ կանաչ կը լինին, վերջը կը կարմրին։ Ես շատ կը սիրեմ կեռաս, նա քաղցր համ ունի։ Ճնճղուկներն ալ կը սիրեն կեռաս։ Նոքա կը թափին ծառերու վերայ և կուտեն։ Նոքա փոքրիկ գողեր են։

36. ՀԱՐ ՎԱՐԴԱՆԸ.

Մէկ թռչուն բուն դրել էր Վարդանենց պարտիզի ծառերէն մէկուն վերայ։ Վարդանը ուզեց տեսնել, թէ արդեօք բունին մէջը ինչ կայ։ Նա ճանկռտուելով ճիւղէ ճիւղ բարձրացաւ։ Օհո՛, նա սկսաւ ծիծաղել։ Հեռը երկնցուց որ առնէ։ Բայց յանկարծ ճիւղը կոտրեցաւ. դոմբ—նա փռուեցաւ գետնի վերայ։

37. ՄԵՂՈՒ.

Դուն մեղու տեսել ես։ Նա ինչի՞ կը նմանի։ Քանի՞ ոտք ունի, քանի՞ թև։ Գիտե՞ս որ նա մէկ խայթոց ունի. ինչտեղ որ խայթէ, այնտեղը կ'ուռի։ Բայց մեղուն մեզ կ'ուտայ նաև քաղցր մեղր։ Մեղրը նա կը հաւաքէ ծաղիկներէն և կը տանէ իւր փեթակը։

38. Հանելուկ.

Անջուր ջրաղաց, Անկրակ բաղարջ։
Այս ինչ է։

39. ՄԵՂՈՒ.

—Մեղո՛ւ, ասա՛ ինձ, դու էր
Միշտ կը թռչիս վար ու վեր։
—Ամեն օր և օրն ի բուն
Ես դաշտ ու ձոր կը թըռչիմ.
Ջանք կը թափեմ ես անվերջ,
Մեղր փնտրելով ծաղկանց մէջ,
Եւ գտածս ես չիտակ
Կը տանեմ շուտ իմ փեթակ։
Երբ որ փչէ ցուրտ քամին,
Ծաղիկները թառամին.
Ես ձմեռը պաշարով
Կը լինիմ խոպառ ապահով։

40. ՃԱՆՃ.

—Ճանճիկ, ասա՛ ինձ, դու էր
Միշտ կը թռչիս վար ու վեր։

—Փոքրիկ ճանճ եմ զուարճասէր,
Միշտ կը թռչիմ վար ու վեր.
Թէ գով տան մէջ, թէ բակին՝
Սաստիկ արևին տաքին,
Կեր ու խումէն, խաղէն ջոկ
Իսկի չունիմ ուրիշ հոգ։
Եւ ներկայով բաւական
Միտք չեմ բերեր ապագան։

41. ԹՌՉՈՒՆ.

Թռչունը բուն կը շինէ։ Բունի մէջ նա ձու կ'ածէ։ Զուն բոլորակ կը լինի։ Մէկ քանի թռչուններու ձուն դանազան գոյներով ներկած կը լինի։ Թռչունը իւր ածած ձուերուն վերայ թուխս կը նստի և ձագեր կը հանէ։ Ձագերը առաջ մերկ կը լինին։ Յետոյ փոքր առ փոքր կը թեւաւորուին։ Դուն տեսած ես թռչունի բոյն։ Դու ձագերուն բունին մէջէն չպիտի հանես։ Մարին իւր ձագերը այնպէս կը սիրէ, ինչպէս մայրը իւր փոքրիկ տղոցը։

42. ՄԱՆՈՒԿ ԵՒ ԹՌՉՈՒՆ.

—«Մանուկ, կը խնդրեմ, կ'աղաչեմ ես քեզ,
Հեռու, ա՜հ հեռու, դու իմ բունիկէս.
Մէջը չի նայես, մանուկ սիրական,
Նորա մէջ փոքրիկ ձագիկներս կան։
Քեզի սը տեսնեն. կը սկսին կանչել
Միթէ դուն կուզես խեղճերուն ՝տանջել»։
Մանուկը տեսնել բոյնը խիստ կուզէր,
Բայց հանգիստ մնաց տեղը, ինչ անէր.

Երեկոյ եղաւ, եկաւ իւր բունը
Ծածկեց ձագերուն սիրուն թռչունը։
Գոհ մնաց տղէն, որուն և ասաց.
«Դու ինձ գթացար, օրհնէ քեզ Աստուած»։

43. ԱՍՏՈՒԱԾ.

Այն ով ուսոյց մրջիւնին
Գետին փորփրել,
Բոլոր ամառ մեծ ջանքով
Պաշար հաւաքել։

Որմէ՞ ուսաւ ասէք ինձ,
Փոքրիկ թռչունը
Ցարդէն, ճիւղէն և բըրդէն
Հիւսել իւր բունը։

Մեղուին խըրատ ով տուեց
Հրաշալի բանիւ
Ծաղիկներէն մեղը ժողովել
Անուշ ու աղնիւ։

Տէրն է դոցա ուսուցիչ
Բարի, անսահման։
Ջանացէք միշտ կատարել
Նորա սուրբ հրաման։

44. ՃՆՃՂՈՒԿ.

Ճնճղուկը մէկ փոքր թռչնիկ է։ Նորա գլուխը փոքրիկ է, կտուցը բարակ ու սուր, մարմինը մէկ ձուի չափ։ Իւրաքանչիւր

ոտքին վերայ ունի չորս մատ։ Նա մէկ ուրախ թռչնիկ է, մէկ-տեղ հանդարտ չի կանգնիլ։ Միշտ մէկ ճիւղէն միւս ճիւղը, մէկ ծառէն մէկալը կը թռչըտի։ Իւր բունը կը շինէ պատերու ծակերուն մէջ կամ տանիքի տակ։ Նա կ'ածէ գորշ բիծերով թըխագոյն ձու։ Ճնճղուկը կ'ուտէ զանազան արմտիք և կեռաս։ Բայց նա շատ կը սիրէ նաև միջատներ, սարդեր, ճանճեր ու թրթուրներ։ Նա անդադար «ճիւ, ճիւ» ձայն կը հանէ, կը ճըլճըլայ։

45. ԿԱՏՈՒ.

Կրակարանի մօտ պառկած է կատուն։ Նա այնտեղ կը տաքնայ։ Նա ունի գեղեցիկ, կակուղ մազեր և մի երկայն ընչացք։ Ագին թաւամազ է ու վար կախուած։ Ոտքերու թաթերուն վերայ սուր սուր ճիրաններ ունի։ Նա կը մռմռայ ու կը մլաւէ։ Լսել ես թէ նա ինչպէս կը մլաւէ։ Մի անգամ ես մեր կատուին բռնեցի, նա ձեռքս ճանկեց։ Կատուն մկները կը բռնէ և կուտէ։ Բայց նա երբեմն թռչունները ալ կը բռնէ և կը սպանէ։ Այդ լաւ չի անիլ։ Նա շատ գող ալ է։ Մի անգամ մեր խորովածացուն գողացաւ ու կերաւ։ Այս ալ վատ կանէ։ Բայց նա իրեն շատ մաքուր կը պահէ։ Նա մաքրասէր է։

46. ՓԻՍԻԿ-ՄԻՍԻԿ.

Կատուն եկաւ փիսիկ-փիսիկ,
Հաղար նաղով ինչպէս հարսիկ,
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց ճիրաններով։
Կատու, կատու, էր ես տրտում,
Թէ մկներն են այսօր արթուն։

47. ՄՈՒԿԸ.

Մուկը փոքրիկ է։ Նորա մորթը ողորկ է ու գեղեցիկ։ Դուն մուկ տեսել ես։ Նորա գոյնը գորշ է։ Նա ունի սուր դունչ։ Նորա ոտքերը բարակ են ու կարճ, իսկ պոչը երկայն։ Ոտքերուն վրայ կայ հինգ մատ՝ սուր սուր եղունգներով։ Ի՞նչ կուտէ մուկը։ Հաց ու պանիր, միս ու ճարպ, իւղ ու ճաքար։ Մուկը չափէ դուրս գող է։ Նա իւր սուր ատամներով կը կրծէ յատակի տախտակները, պահարանը և ներս կը մտնի։ Ինչ որ գտնէ, կը գողանայ և կուտէ։ Գնա, կորիր, փոքրիկ գող. գողերուն ոչ ոք չի սիրեր։ Մէկ անգամ մուկը եկաւ մօրս քովը և ասաց.«Սիրելի մայրիկ, քու իւղէդ փոքր ինչ տուր ինձ»։ Մայրս ասաց.—«Ա՛ռ, պստիկ սատանայ»։ Մուկը առաւ և իսկոյն փախաւ գնաց։

48. ԿԱՏՈՒՆ ԵՒ ՃՈՒՆԸ.

Մէկ որսկան շուն մէկ անգամ նապաստակ բռնեց և բերեց տուն։ Կատուն այդ տեսնելով նախատեց շունին նորա անգթութեան համար։ Այդ բոպէին նոցա առաջը մէկ հատ փոքրիկ մուկ դուրս ելաւ։ Կատուն իսկոյն վրան վազեց, բռնեց ու կերաւ։ Շունը ասաց. «Այդ ինչ է քու արածդ։ Դու ինձ կը նախատէիր, որ ես իմ տիրոջս համար մէկ նապաստակ բռնել էի, իսկ ինքդ այժմ մուկն անուշ կանես»։—«Է՜հ, իմ կերածս մէկ չնչին մուկ է», պատասխանեց կատուն։

Մեր կատուն իւր աչքի գերանը թողուցած, ուրիշի աչքի շիւղը կ'որոնէ։

49. ԲԱԿ.

Գեղացիին տան բակին մէջ աւելի շատ բան կայ տեսնելու, բան քաղաքի տներուն բակին մէջը։ Նա շրջապատած է զանա-

զան չէնքերով։ Բակին մէկ կողմը կը գտնուին գեղացիին տունը, ձիերու ախոռը, կովերու ու եզներու գոմը, ոչխարներու փարախը, խոզանոցը, հաւնոցը և թոնրատունը։ Միւս կողմը կայ մէկ չէնք, մէկ մեծ դուռով։ Այդ գեղացիի շտեմարանն է։ Այստեղ նա կը պահէ իւր ցորենը, գարին ու կորեկը, Բայց շատ գիւղերու մէջ ցորենը կը պահեն ոչ թէ շտեմարաններու, այլ հորերու մէջ։

50. ԱՔԱՂԱՂ.

Ահա աղբանոցի մէջ կանգնած է աքաղաղը։ Տես, նա ինչ հպարտ հպարտ ման կուգայ։ Կարծես մէկ մեծ պարոն լինի։ Նա ունի կարմիր կատար և երկայն կարմիր մօրուք։ Նորա փետուրները գեղեցիկ են ու գոյնզգոյն։ Պոչը երկայն է և մանգաղի ձևով ծռած։ Նորա ամէն մէկ ոտքին վրայ մէկ մէկ երկայն բիտ կայ։ Նորա իւրաքանչիւր ոտքին վերայ կայ չորս ճիրանաւոր մատ, երեքը առջևէն, մէկը ետևէն։ Երբ աքաղաղը հատիկ գտնէ, իսկոյն կը կանչէ իւր հաւերուն և նոցա կուտայ։ Երբ նա կշտանայ, կը կանգնի մէկ բարձր տեղ և կը կանչէ կուկուրեկո։ Աքաղաղը կը զարթնի առաւօտուն կանուխ և երկինքը կապուտածին պէս իր անոյշ ձայնով կը խօսէ մեծ մամային «Մեծ մամա, մեծ մամա, ել տեղէդ—ժաշկըթէ, տունըդ—տեղըդ ժողոտէ»։

51. Հանելուկ.

Բարձրանամ—սարէն ձայն տամ
Մեռած մարդուն—կենդանութիւն։
Այս ինչ է։

52. ԱՔԱՂԱՂ.

Ինչու աբլարը կանգնած բակի մէջ
Իւր կուկուրիկուն կը կանչէ անվերջ։

Վասն զի վաղուց արևն է ծագել,
Բայց դեռ ծոյլ տղան քունէն չէ զարթել,

Տեղէն չէ ելել, աղօթք չէ արել,
Դպրոցի դասը դեռ չէ սովորել։

Իւր կուկուրեկուն աբլարը կը կանչէ,
Տըղայոց պարքը միտքերն կը ձգէ։

53. ՀԱՒ.

Հաւ աքաղաղէն աւելի փոքր է։ Նա չունի աքաղաղին պէս փայլուն թեւեր, մանգաղաձև ծռած պոչ ու բիտեր։ Բայց նա հաւկիթ կածէ։ Հաւկիթ ածելու ժամանակ նա կը կոկռայ և իմաց կուտայ տանտիկնին։ Հաւը թէև աքաղաղէն փոքր է և նորա նման բիտեր չունի, բայց նորամէն աւելի օգտակար է։ Հաւը թուխս կը նստի ու ձագեր կը հանէ։ Նա լաւ մայրութիւն կանէ։ Իւր ձագերուն զբօսնելու կը տանէ։ Երբ որդեր ու հունդեր կը գտնէ, գուտգուտալով կը կանչէ ձագերուն, կը մանրըցընէ և կուտայ նոցա։ Նա իւր թեւերուն տակ կը պահպանէ ձագերուն նաև անձրևէ և գիշատիչ թռչուններէ։

54. ՀԱՒԿԻԹ.

Հաւկիթը կլոր ձև ունի։ Նորա կճեպը ճերմակ է ու շատ բարակ։ Հաւկիթին մէջ կայ սպիտակուց ու դեղնուց։ Դեղնուցը դեղին կը լինի, սպիտակուցը՝ սպիտակ։ Հաւկիթէն կելլեն փոքրիկ ձագեր։ Մայրս հաւկիթը կը խաշէ, բայց նորամէն կը պատրաստեն նաև ձուածեղ։ Ո՞րն աւելի կը սիրես՝ խաշած հաւկիթ թէ ձուածեղ։ Ես աւելի ձուածեղ կը սիրեմ։

55. Հանելուկ.

Փոքրիկ կարաս ունիմ ճերմակ, Միջի ջուրը երկու տեսակ։
Այս ինչ է։

56. ԲԱԴ.

Բադը հաւէն մեծ է։ Նա թէև լաւ կը լողայ, բայց աղէկ քալել չի կրնալ և գրեթէ բոլորովին չի կրնալ թռչելու։ Նա շատ ծանրաշարժ է։ Նորա ոտքերը մաշկապատ ըլլալնուն համար լողալու խիստ յարմար են։ Նորա մարմինը ծածկուած է խիտ փետուրներով։ Այդ խիտ պատճառով փետուրներու մէջէն ջուրը չի կրնալ անցնել։ Ընտանի բադը կուտէ՝ հաց, գարի, վարսակ, թեփ, խաշած գետնախնձոր և շատ ուրիշ բաներ։ Վայրենի բադը ինքը կը գտնէ իւր կերակուրը։ Նա կուտէ որդեր, խղունջներ ու փոքրիկ ձկներ։ Բադը մեզ կուտայ փետուր և համեղ միս։ Բադի ձուն կեփեն, իսկ միսը կը տապակեն կամ կը խորովեն։ Նորա փետուրներէն ինչ կանեն։

57. ԲԱԴԻԿ.

— «Բադիկ – բադիկ,
Կարմիր թաթիկ,
Այդ ուր կերթաս այդպէս կամաց.
Ձագուկներդ չորս դիդ առած»։

—Ես ուր կերթամ. ջուր գտնելու,
Ձագուկներս լուանալու,
Լուանալու մաքուր մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մուր։

58. ԾԻԾԵՌՆԱԿ.

Ծիծեռնակը մեծ ճարտարութեամբ իւր բունը կը շինէ։ Պինդ ցեխի կտորները նա իւր լոքձունքով կը թրջէ և մէկը միւսին կը կպցնէ։ Բունին մէջ նա մաղեր ու փետուրներ կը փռէ և իւր ձագերուն համար փափուկ օրօրոց կը շինէ։ Ձագուկները իրենց բերանը մեծ մեծ բաց կանեն, երբ որձակը նոցա համար ճանճեր, մժղուկներ, մոծակներ և զանազան միջատներ բերէ։ Դու ծիծեռնակին վնաս չի պիտի տաս։ Նա շատ սիրուն թռչուն է և շատ լաւ ալ կերգէ։ Երբ աշունը կուգայ, ծիծեռնակները կը պատրաստուին աւելի տաք երկիր թռչել երթալ։ Հապա ինչ թող անեն խեղճերը. ցուրտը վրայ կը հասնի և ուտելու բան չեն գտնիլ։ Նոքա կը ժողովուին միասին, երամներ կը կազմեն և կը չուեն դէպի տաք երկիրներ։ Բայց գարնան նոքա նորէն կը վերադառնան։

59. ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻ.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ։

Ա՜խ, թռիր, ծիծեռնակ,
Ծնած տեղս Աշտարակ,
Անդ շինիր քո բունը
Հայրենի կտուրի տակ։

Անդ հեռու ալեոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն
Սպասում է օրէ ցօր։

Երբ տեսնես դու նոքա,
Ինձնից շատ բարև արա,
Ասա թող նստի լայ
Իւր անբախտ որդու վերայ։

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով ողբալով,
Կեանքս մաշուել եղել է կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։

Դէհ սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, գնա արագ,
Դէպի Հայոց աշխարհը,
Ծնած տեղս—Աշտարակ։

60. ԱՂԱՒՆԻ.

Աղաւնիները շատ սիրուն թռչուններ են։ Երբ նոքա տանիքի վերայ նստած կը լինին, կտուցներով իրենք իրենց կը մաքրեն. կը զարդարեն և ամէն մէկ փետուր կը յարդարեն։ Այդ պատճառով նոքա խելօք տղոց պէս միշտ մաքուր կը լինին։ Նոքա կապրին միասին զոյգ զոյգ։ Իւրաքանչիւր զոյգն ունի իւր բունը։ Մարին կածէ իւր բունի մէջ երկու սպիտակ ձու, թուխս կը նստի և ձագ կը հանէ։ Ձագերը առաջ մերկ կը լինին և չեն կրնալ տեղերէն շարժիլ։ Ծնողները նոցա կը տաքացնեն ու կը սնուցանեն, մինչև որ թեաւորուին, այնուհետև ձագերը կը թռչեն և իրենց համար իրենք սնունդ կը ճարեն։

61. ՄԵՂՈՒ և ԱՂԱՒՆԻ.

Մէկ անգամ մեղուին մէկը լիճը ընկաւ։ Այդ բանը վերէն մէկ աղաւնի տեսաւ, որ ծառէն մէկ տերև կտրեց ու ձգեց լճին մէջը։ Մեղուն ճանկռտուելով վեր ելաւ, նստաւ տերևին վերայ։ Երբ թևերը չորցուց թռաւ գնաց իւր նաւակէն։

Փոքր ինչ յետոյ, երբ աղաւնին հանգիստ իւր տեղը նստած էր, որսորդին մէկը հրացանը ուղղեց աղաւնիին որ զարնէ։ Այդ իսկ միջոցին մեղուն կայծակի պէս վրայ հասաւ և այնպէս խայթեց որսորդին, որ նա վեր ցաթկեցաւ։ Գնդակը չի կպաւ աղաւնիին, այլ բովէն անցաւ։ Աղաւնին սրտին խորքէն մեծ շնորհակալութիւն յայտնելով մեղուին, թռաւ փախաւ այնտեղէն։

62. ՈՉԽԱՐ.

Ոչխարի մարմինը հաստ է և ծածկուած կակուղ ու տաք բրդով։ Առհասարակ նա սպիտակ կը լինի, բայց կան նաև սև ոչխարներ։ Նոցա ոտքերը բարակ են, ոտքերուն պճ՝ղները երկու կճղակ կունենան։ Ոչխարները կճղակաւոր կենդանիներ են։ Ամառը նոցա կը լուանան, յետոյ կը խուզեն։ Ո՛չ, ընդհակառակն նոքա շատ կ՝ուրախանան, որ տաք ամառուան օրերուն նոցա վրայէն կը հանեն այն հաստ բրդէ մուշտակը։ Ոչխարը շահաւէտ կենդանի է։ Նա չի խածնիլ և չի յարձակուիլ մարդու վերայ, ինչպէս շունը։ Խոշը շատ ուժեղ կը լինի։ Երբ նա մէկ ուրիշ խոշի կը պատահի, նոքա հետ կը կռուի։ Մաքին գառնուկ կը ծնի։ Գառնուկները գեղեցիկ կենդանիներ են։ Մանը տղոց պէս նոքա ուրախ ուրախ կը խայտան առոյգ անդին։ Ես գառներ շատ կը սիրեմ։

63. ԳԱՌՆՈՒԿ.

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդդ ճերմակ ու փափուկ.
Դաշտ վազելով ու արօտ
Կը քաշես մօրդ կարօտ.
Մի լար, գառնուկ սիրական,
Գոգրիկ ստի դու նման,
Կուգայ մայրդ, հետը շատ
Կը բերէ քեզ անոյշ կաթ։

64. Ծեծ կերած գառնուկ.

«Ինչո՞ւ կուլաս, դու գառնուկ»,
—Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։
«Ո՞վ ծեծեց քեզ, իմ գառնուկ»,
—Մէկ վատ պառաւ, իմ մայրիկ։
«Ինչո՞ւ ծեծեց քեզ, գառնուկ»,
—Ծառի տակն էի, մայրիկ։
«Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնուկ»,
—Մէկ ճիպոտով, իմ մայրիկ։
«Ո՞ր տեղիդ զարկեց, գառնուկ»,
—Ոտիկներուս, իմ մայրիկ։
«Ի՞նչպէս լացիր, դու գառնուկ».
—Մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜, իմ մայրիկ։

65. ԿՈՎ.

Կովը ձիի պէս գեղեցիկ չէ։ Նորա մարմինը, վիզը և ոտքերը հաստ են, ճակատը լայն, աչքերը պղտոր. իսկ բերանը լայն։

Նորա ճակատին վերայ երկու երկայն եղջիւր կայ, իսկ ոտքերը կը վերջանան կճղակաւոր պճեղներով։ Բայց կովը շատ օգտակար կենդանի է։ Նա մեզ համեղ կաթ կուտայ։ Կաթէն կարագ կը հարեն ու պանիր կը կարեն։ Նա կուտայ մեզ նաև միս, ճարպ և կաշի։ Կաշիէն կօշիկներ կը կարեն, ճարպէն մոմ ու սապոն կը շինեն։ Կովը տարին մէկ անգամ կը ծնի։ Նորա ձագին հորթ կամ մոզի կ'ասեն։ Կովը եղջերաւոր կենդանի է։ Ուրիշ ինչ եղջերաւոր կենդանիներ գիտես։ Կովն ու եզը կուտեն արօտ, յարդ և բանջար։ Երբ կուտեն, կը կշտանան, կը պառկին և կ'որոճան։ Նոքա որոճող կենդանիներ են։ Ուրիշ ինչ որոճող կենդանիներ գիտես։

66. Հանելուկ.

Կով է, կով չէ, Բայց հորթ չունի։
Կաթ կուտայ, Այս ինչ է։

67. Ձի.

Ձին մէկ գեղեցիկ կենդանի է։ Երբ նա կառք կը քաշէ, վիզը կամարի պէս կը ծռէ։ Նորա գլուխը երկայն է, վիզին վերայ ունի երկայն բաշ։ Մարմինը բոլորակ է, գեղեցիկ և կարճ մազերով ծածկուած։ Ոտքերը բարակ են։ Նորա սմբակներուն պայտ կը դամեն, որ նա կսրոգանայ ամուր կանգնել։ Ձին մազի գոյնը կը լինի սև, գորշ, կարմիր, գեղին կամ աշխէտ և սպիտակ։ Ձին չի կրնայ արդեօք ծիծաղել։ Այո, նա կը ծիծաղի, կը խրխնջայ, երբ ծառան գարիին պարկը ձեռքը տխոռը կը մտնէ, երբ նա դաշտը ուրախ ուրախ կ'արածէ, կամ երբ նա իւր տիրոջ կը տեսնէ։ Բայց երբ նա իւր ոտքերով գետինը կը գոփէ։ Նա իւր ոտքերով կը գոփէ, երբ երկար ժամանակ մէկ

բանի կը սպասէ։ Ձին կուտէ խոտ, յարդ, խաբ, վարսակ և գարի։ Ձին կամ կը հեծնեն և կամ կը լծեն։

68. ՁԻՆ և ԷՇԸ.

Մէկ ծանը բեռնաւորուած էշի հետ մէկ պարապ ձի կերթար։ Էշը իւր ծանը բեռին տակը կը հառաչէր։ Նա ասաց ձիին. «Քու մէջքիդ վերայ դուն ոչինչ չունիս։ Կ'աղաչեմ քեզ, օգնէ ինձ և մէկ քիչ մը իմ բեռէս առ»։ Բայց ձին նախատեց նորան ասելով. «Դու սարսափելի ծոյլ ես։ Ուրիշին ինչ պարտքը ն է քո բեռդ առնել տանել»։ Էշը կրկին անգամ աղաչեց. «Իմ քովս ալ այժ չի մնաց։ Եթէ Աստուածդ կը սիրես, օգնէ ինձ, թէ չէ այս բոպէիս կընկնիմ և հոգիս կուտամ»։ Բայց ձին դարձեալ չկատարեց նորա խնդիրքը։ Էշը ընկաւ և շունչը փչեց։ Բոլոր բեռը այժմ ձիին վրան դրին, որուն վրայ աւելցուցին էշի կաշին ալ։

69. ԴԱՉՏ.

Մենք շատ անգամ դաշտ գնացել ենք զբօսնելու։ Այնտեղ մենք տեսել ենք արտեր ու բանջարանոցներ։ Արտերու մէջ կը բանին զանազան արմտիք, իսկ բանջարանոցներու մէջ գետնախնձոր, բողկ, բակլայ, լոբիա, մաշ, սիսեռ և ուրիշ շատ կանաչեղէն։ Բայց այս ամէնը ինքն իրեն չի բանիլ, այլ գեղացիները կը ցանեն կամ կը տնկեն։ Սակայն նոցա ցանածն ու տնկածը չէը աճիլ ու չէր հասնիլ, եթէ բարերար Աստուած նոցա վրայ չը ցողէր անձրևի կաթիլները և չը ղրկէր նոցա համար արեգակի լոյսը։

70. ԱՐՏ.

Դաշտի մէջ գեղացիները կը ցանեն չորս տեսակ արմտիք.

ցորեն, գարի, վարսակ ու կորեկ։ Քանի որ նոքա կանաչ կը լինին, արօտի շատ կը նմանին։ Նոքա ալ, ինչպէս և արօտը, ունին դատարկ ցողուն և նեղ ու երկայն տերևներ։ Նոցա ցողունն ալ ծնկեր ունի։ Բայց երբ նոքա բաւականին կը բարձրանան, նոցա ցողունի ծայրը կը բանին հասկեր, որոնց մէջ կը գտնուին արմտիքը կամ սերմերը։ Երբ արտը կը հասնի, կը հնձեն, հընձածը կը կալսեն, կ'աղան և կը շինեն ալիւր։ Մեր ընտանի կենդանիներն ալ իրենց սնունդը արտերէն կստանան։ Նոքա յարդ շատ կը սիրեն։ Արտերու մէջ կը բնակին նաև մէկ քանի տեսակ թռչուններ ու կենդանիներ, ինչպէս են զորօրինակ արտոյտը, լորը, կաքաւը և նապաստակը։

71. ՃՆՃՂՈՒԿԸ ՈՒ ԱՐՏԻՆ ՏԷՐԸ.

Մէկ ճնճղուկ արտի մէջ բուն դրել էր և ձագեր հանել։ Մէկ օր արտի տէրը կուգայ, արտին գլուխը կանգնի ու կասէ. «Արդէն հնձելու ժամանակն է, վաղը պիտի մարդիկ կանչեմ և գամ հնձեմ»։ Երբոր ճնճղուկը տուն դարձաւ, ձագերը ասացին. «Տէ, չուտ արա, արի այստեղէն փախչինք. այսօր արտին տէրը եկաւ այսպէս ու այսպէս ասաց»։ Մայրը պատասխանեց։ «Մի վախնաք, քանի որ նա յոյսը ուրիշի վրայ դրել է, մենք այստեղ երկար կը կենանք»։ Մի քանի օրէն արտին տէրը նորէն եկաւ և ասաց. «Հէյ, չեղաւ։ Արտիս ժամանակը անցնելու վրայ է, հասկերը չորացել են և ցորենը կը թափի։ Վաղը պիտի մարդիկ վարձեմ ու գամ հնձեմ»։ Երբ մայրը տուն եկաւ, ձագերը պատմեցին, թէ այսօր ալ եկաւ արտի տէրը և այսպէս ու այսպէս ասաց»։ Մի վախնաք, պատասխանեց մայրը, քանի որ նա յոյսը ուրիշի վրայ դրել է, մենք այստեղ երկար կը կենանք»։ Մի քանի օրէն արտատէրը դարձեալ եկաւ և ասաց. «Հէյ, այս անգամ

ալ չեղաւ։ Աղոր ճարն այն է, որ վաղը ես, իմ որդիս և իմ կինը, մարդագլուխ մէկ մէկ մանգաղ առած գանք ու հնձենք»։ Երբ մայրը վերադարձաւ, ձագերը պատմեցին թէ այսօր ալ եկաւ արտատէրը և այսպէս ու այսպէս ասաց։ Մայրը պատասխանեց։ «Այժմ նորամէն վախնալու է, որովհետև նա իրեն բանը իր ձեռքով կուզէ կատարել»։

Այդ ժամանակը ձագերն արդէն մեծցեր էին։ Ուստի խկոյն թռան գնացին։

72. ԼՈԲԻԱ.

Լոբիան բանջարանոցի մէջ կը բնի։ Նորա հատիկները կը գտնուին մէկ երկայն ու կանաչ պատեանի մէջ։ Պատեանը նոցա տնակն է։ Այնտեղ նոցա համար ապահով է ու տաք։ Նա նոցա կը պաշտպանէ անձրևէն և այրող արևէն։ Պատեանը իմ երկու մատիս չափ երկայն է և ունի մէկ մատի չափ լայնութիւն։ Երկու կողմէն նա մէկ մէկ կարան ունի. առջևէն՝ մէկ սուր պտուկ, ետևէն՝ մէկ կարճ կոթ։ Կայ ցեցի լոբիա և թուփի լոբիա։ Ցեցինը խայտախարիւ կը լինի, թուփինը՝ սպիտակ։ Լոբիային հատիկը ունի կեղև և միջուկ։

73. ԱՆՏԱՌ.

Ի՞նչպէս գեղեցիկ է անտառը։ Որչափ անտառին խորքերը երթաս մտնես, այնչափ ալ աւելի խոր լռութիւն կը տիրէ չորս դիդ, բայց այնքան ալ աւելի կը սքանչանաս։ Այնտեղ դու կը տեսնես բարձր բարձր ծառեր, զոր օրինակ. կաղնի, հացի, բարդի, լորի, թեղի, թեղոչի, ճապկի։ Ծառերուն մէջէն կերևնայ կապոյտ երկինքը։ Ճիւղերուն վերայ կը ճռուողին թռչուններ։ Բայց անտառի մէջ կան նաև թուփեր։ Ծառերուն տակը, խիտ թուփերուն մէջ կը բնակին շատ կենդանիներ. նապաստակ,

աղուէս, այծեամ ու եղջերու։ Անտառի մէջ կը բնակեն նաև գիշատիչ գազաններ, ինչպէս են գայլը և արջը։

74. ԿԱՂԻՆ.

Կայ երկու տեսակ կաղին. խոզակաղին և արքայակաղին։ Խոզակաղինը խոզերը կուտեն, արքայակաղինը՝ մենք։ Արքայակաղինը բոլորակ կը լինի և նստած մէկ կանաչ ատամնաւոր մատնոցի մէջ։ Նորա փեճեկը նախ սպիտակ կը լինի։ բայց երբ կը հասնի, կը դառնայ գորշ։ Փեճեկի մէջ կը գտնուի միջուկը։ Ես շատ կը սիրեմ միջուկը. նա համով կը լինի։ Կաղինի մէջ երբեմն կը լինի նաև որդ, որ կուտէ միջուկը։ Նա կը բուսնի թուփերու վերայ։ Տղայքը կերթան անտառ, կաղին կը փետեն և կը բերեն իրենց մօրը։

75. ԳԱՅԼ.

Գայլը մէկ մեծ շունի չափ է և նորա պէս ալ ուժեղ է։ Նա շատ ծակաչք է. ինչքան ալ ուտէ, չի կշտանալ։ Երբ նա քաղցած է, կը յարձակուի այն կենդանիին վերայ, որին նա կը կրնայ յաղթել։ Գայլը գիշատիչ գազան է։ Ամառը նա միայնակ որսի կերթայ, իսկ աշնան և ձմեռը վոհմակներով։ Գայլը երբեմն ոչխարներ ալ կը յափշտակէ հօտերէն ու կը լափէ։ Այդ պատճառով հովիւները իրենց մօտ զամփռներ կը պահեն։ Գայլը կը յարձակուի մինչև անգամ ձիերու, կովերու, եզներու ու եղջիւրներու վրայ։ Բայց սոքա կը պաշտպանուին իրենց սմբակներով ու եղջիւրներով։ Գայլը մարդէ կը վախնայ։ Բայց երբ շատ քաղցած կը լինի, նա չի վախնալ մինչև անգամ որսորդներէն։

76. ՍՏԱԽՕՍ ՀՈՎԻՒԸ.

Հովիւին մէկը սովորութիւն էր արել իւր ընկերներուն խաբելու։ Շատ անգամ նա ահագին ձայնով կը կանչէր։ «Գայլ եկա՜ւ, գայլ եկա՜ւ»։ Բայց երբ միւս հովիւները կը վազէին օգնութեան վազելու, նա կը ծաղրէր և կը խնդար նոցա վերայ։

Մէկ օր ալ իսկապէս մէկ գայլ յարձակուեցաւ նորա հօտին վերայ։ Նա սկսաւ առաջուան պէս աղաղակել. «գայլ եկա՜ւ, գայլ եկա՜ւ»։ Ընկերները կարծելով որ նորա այդ վարմունքը նոր խաբէութիւն է, տեղերէն չ'շարժեցան։ Գայլը յարձակուեցաւ նորա հօտին վրայ և յօշոտեց ոչխարները։

Առածն կասէ՝ «Սուտ խօսողի տունը ընկաւ կրակ, բայց ոչ ոք ընծայեն հաւատաց»։

77. ՍԱՅԼ.

Սայլը ունի երկու անիւ, մէկ սեռն, մէկ աւարք և երկու կող։ Սեռնի իւրաքանչիւր ծայրը մէկ անիւ կայ։ Անիւը ունի մէկ գունդ, շատ սոլեր և մէկ շրջապատ։ Աւարքը ունի երկու թև, երկու կոփ, մէկ գլխամէջ և մէկ դիմհար։ Աւարքի թևերը սայլի առջևը կը միանան և սուր անկիւն կը կազմեն։ Գլխամէջին կը լծեն եզները։ Ինչու համար է դիմհարը։ Իւրաքանչիւր թև ունի երկու ատամ։ Այս ատամներու մէջ կը պատի անիւներու սեռը։ Կոփերի վերայ կը գտնուին սայլի կողերը։ Սայլի կողերը կունենան չորս ցից, երկու երկայն ձող կամ թատ և շատ ճաղեր։

78. Հանելուկ.

Չորս եղբայր կան,
Մէկզմէկու ետևէ միշտ կը վազեն,
Բայց մէկ մէկու նոքա երբէք չեն հասնիր։
Այս ինչ է։

79. ՊԱՌԱՒՆ ՈՒ ՀԱՒԸ.

Հաւը օրական մի ձու էր ածում պառաւի համար։ Բայց պառաւն ագահ էր. նա մտածեց, որ եթէ շատ կուտ տայ, հաւը մի ձուի փոխանակ երկուսը կամ երեքը կածի օրական։ Մտածեց ու կատարեց։ Հաւ սաստիկ պարարտացաւ և էլ ձու չածեց։

80. ՆԱՊԱՍՏԱԿԸ ԵՒ ՈՉՆԻՆ.

Սպիտակ ու քնքուշ նապաստակը ոչնուն ասաց. «եղբայր, ինչ ծակծկող ու տգեղ զգեստ ունիս»։

—Ճշմարիտ է, պատասխանեց ոչնին, բայց իմ ծակծկող փշերնն ինձ ազատում են շան և գայլի ատամներից. նոյն ծառայութիւնն անում է քեզ քո գեղեցիկ մուշտակը։

81. ԱՌԻՒԾ ԵՒ ԳՈՐՏ.

Առիւծը լսեց գորտի կրկռոցը և վախեցաւ։ «Երևի այս գոռացողը մեծ գազան պէտք է լինի հա՜» մտածեց առիւծը և պատրաստուեցաւ կռուելու։ Այդ միջոցից ճահճի միջից դուրս ցատկեց գորտը։ Առիւծը ջարդեց նրան իւր ուժեղ թաթով։ «Այսուհետև բանը չ'տեսած չպէտք է վախենամ», մտածեց նա։

82. ՁՆԻԿ.

«Ապա՜, սիրուն չնիկ, կարդա՜, թէ ինչ է գրած իմ գրքում», ասաց Հայկը իւր փոքրիկ շանը. «ինչ իմ բանն է զիր կարդալը, ասաց նա. ես տունը կը պահպանեմ, գիշերները չեմ քնիլ ու միշտ կը հաչեմ, գայլերին կը վախեցնեմ, որսի կը գնամ, նա-

պատակ կը բռնեմ, բաղեր կը գտնեմ. իմ կողմից սա էլ բաւական է»։

83. ՈՉԽԱՐ.

Ասում են, թէ ոչխարը յիմար է։ Հրդեհի ժամանակ ոչխարներն իրենք իրենց ընկնում են կրակի մէջ իսկ երբոր գայլ են տեսնում, փայտի պէս մնում են իրենց տեղը և յիմարաբար կըճզակներով գետինը փորում են։

Բայց մեր ինչին է պէտք ոչխարի խելքը. մեզ հարկաւոր է նրա բուրդը, գուլպայ, շալ և մահուտ գործելու համար, նրա ճարպը՝ սապոն և մոմ շինելու, կոշին կօշիկների ու մորթը մուշտակների համար, իսկ միսը խորովելու։

84. ՄՈՒԿ ԵՒ ՄՈՒԿԻԿ.

Օր մը վազեց մուկիկը
Դրացի մուկին ծակը,
Գիտես ինչ կայ խնամի,
Ասաց անոր հեալէն
Կըսեն թէ մեր թշնամի
Մեծ կատուն. ալեալէն,
Ասիւծին ընկեր է ճանկ
Հելէ փառի, որ ադատեցանք.
Մուկն անոր ինչ պատասխան,
Տայ աղէկ.—լսելու բան.—Հաքա, հերիք է հերիք.
Մինչև երբ պիտի խաբուինք
Թէ բաներն այնտեղ հասնին
Որ նոքա ճանգ ճանգի գան,
Գիտնաս որ այն առիւծին

Բանը բուրդ է խնամի ճան.
Կատուին հախէն ով կուգայ.
Կատուէն ուժով ինչ գաղան կայ։

85. ՕՁԸ.

Ձմեռ էր։ Գիւղացին անտառ գնաց փայտ կտրելու։ Փայտ կտրելիս նա տեսաւ մի օձ, որը ցրտից սառել, փետացել էր։ Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց, դրեց կրակի մօտ, որ տաքանայ։ Օձը տաքացաւ թէ չէ՝ իսկոյն յարձակուեց գիւղացու վերայ, որ կծէ։ «Ո՛վ ապերախտ ասաց մարդը, իմ լաւութիւնը դրանով ես վճարում»։ Այս ասաց ու կացնի քիւփով խրփեց ու գլուխը ջախջախեց։

86. ԵՐԿՈՒ ԱՔԱՂԱՂ.

Երկու աքաղաղ կռուեցին և մինը յաղթեց միւսին։ Նա՝ որ յաղթուեցաւ, փախաւ, սրահի տակ մտաւ, իսկ նա՝ որ յաղթեց, բարձրացաւ կտուրը և հպարտ—հպարտ «ծուղրուղու կանչեց։ Այդ բոպէին արծիւը թռչում էր վերևից, նա տեսաւ հպարտացող աքաղաղին, յափշտակեց նրան ու տարաւ, անուշ արաւ։

87. ՈՒՄՈՒՄՆԱՐԱՆ.

Որդին. «խնդրում եմ, հայրիկ, ասա՛ ինձ, ինչո՞ւ որ եղբայրը Գրիգորը շուտ է վերկենում, նա ո՞ւր է գնում. ինչո՞ւ մինչև ճաշ տուն չէ յետ գառնում»։

Հայրը. Աչքիս լոյսը, եղբայրդ ամեն առաւօտ դպրոց է գընում և մինչև ճաշ այնտեղ է մնում. այնտեղ են գնում և ուրիշ մանուկներ նրա ընկերները։ Նոքա գնում են ուսում առնելու, որ յետոյ բարի, խելօք մարդ լինեն։

88. ԼԱՒ ԸՆԿԵՐ.

Մարդիկ վեր առան և կակազի հասարակ ծաղիկը չահոքբամի հետ մի ծաղկամանում տնկեցին։ Մի քանի ժամանակից յետոյ կակազիցն էլ չահոքբամի հոտ էր գալիս։ Լաւ ընկերի հետ որ ապրենք, մենք էլ շատ բան կը վաստակենք։

89. ՋՈԿ-ՋՈԿ ԵՒ ՄԻԱՍԻՆ.

Վարդանիկն ու Սաթենիկը իրար հետ խաղում էին։ Վարդանիկն իր հոլն էր պտտացնում, Սաթենիկը տիկին էր խաղում։ Վարդանիկը բարկացաւ Սաթենիկի վրայ։ «Իմ հոլին մի մօտենար. ինձ հետ խաղ մի անիր», ասաց։ «Դու էլ իմ տիկինին մի ձեռք տար պատասխանեց Սաթենիկը նեղացած։

Մանուկները յօնքերը կախեցին։ Նրանք հեռացան իրարից և սկսեցին ջոկ-ջոկ խաղալ։ Բայց մենակ սկսած խաղն էլ երկար չքաշեց և մեր մանուկները չուտով ձգեցին իրենց խաղալիքները։ Մանուկները իրենց խաղը ինչո՞ւ չչարունակեցին։

90. ՀԱՒԸ ԵՒ ՁԱԳԸ.

Հաւը ձագերն առաւ ու գնաց քշուշ անելու։ Քշուշ անելիս՝ մայրը նկատեց, որ ուրուրը պրտտում է երկնքի երեսին և նայում է ձագուկներին։ Մայրը ձայն տուեց։ Ձագերը հասկացան՝ որ վտանգ կայ. վազեցին, մտան մօր թևերի տակ։ Ուրուրը երկար պտտեց և էլ ճուտ չտեսնելով գնաց։ Հաւը բաց արեց թևերը։ Ձագերը նորից սկսեցին վազվզել ու խաղալ։ Անցկացաւ մի քանի րոպէ։ Սրատես ուրուրը հեռուից նկատեց ձագերին և թռաւ նրանց կողմը։ Հաւն էլ քնած չէր. նա բարձր ձայնով կանչեց իր ձագերին։ Վազեցին ձագերը, մտան իրենց մօր թևի տակ։ Բայց մի ձագուկ ականջ չդրեց իր մօր ձայնին. նա կարծեց, թէ ուրուրն իրեն վնաս չի տալ առաջուան պէս կանցնի կերթայ. բայց սխալուեց. ուրուրը նետի պէս ցած իջաւ և նրան ճանկերի մէջ առաւ տարաւ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0243074

7967

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С.-С.Р